



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱԿՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻԶԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևանի համայնք  
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Իջևան, (0263)42138 ijevanmunicipality@gmail.com

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2022թվականի N 1529

### ՏԱԿՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻԶԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՅԳԵՀՈՎԻՏ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0.23718ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՃՇՏՄԱՆ, ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

Համայնքի ղեկավարին են դիմել քաղաքացիներ Հռիփսիմե Օվկիանոսի Թամրազյանը՝ ծնված 07.07.1963թ., Էդվարդ Գրիշայի Թամրազյանը՝ ծնված 07.11.1982թ., Մելինե Գրիշայի Թամրազյանը՝ ծնված 02.11.1989թ. և Վաղինակ Գրիշայի Թամրազյանը՝ ծնված 24.10.1985թ. որ համաձայն Այգեհովիտ գյուղական համայնքի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 20.07.2006թ. թիվ 18 որոշման, Տավուշի մարզի Այգեհովիտ գյուղի վարչական սահմաններում սեփականության իրավունքով ձեռք է բերել գյուղատնտեսական նպատակային, վարելահոր գործառնական նշանակության հողամաս /ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր /ս/մ թիվ 5153, թիվ 5152 թիվ 5154 կազմված՝ 30.11.2022թ./, որի օրինական մակերեսը կազմում է 0.23718հա: Չափագրումից պարզվել է, որ հողամասի փաստացի մակերեսը կազմում է 0.23718հա, ուստի դիմել է հողամասի սահմանների ճշտման և իրավական կարգավիճակի որոշման խնդրանքով /ծածկագիր 11-009-0373-0094/:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ է 0.23718հա մակերեսով սահմանազատված հողամասը չի գտնվում ՀՀ „Հողային օրենսգրքի,, 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ և ղեկավարվելով ՀՀ „Հողային օրենսգրքի,, թիվ 43 հոդվածի, 3-րդ կետի պահանջներով.

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Հաստատել՝ Տավուշի մարզի Իջևան համայնքի Այգեհովիտ գյուղի վարչական սահմաններում գտնվող սեփականության իրավունքով քաղաքացիներ Հռիփսիմե Օվկիանոսի Թամրազյանին, Էդվարդ Գրիշայի Թամրազյանին, Մելինե Գրիշայի Թամրազյանին և Վաղինակ Գրիշայի Թամրազյանին պատկանող 0.23718հա մակերեսով հողամասի սահմանները, ըստ ճշտված սահմաններով հատակագծի /ծածկագիր 11-009-0373-0094/:

2.Ճանաչել քաղաքացիներ Հռիփսիմե Օվկիանոսի Թամրազյանի, Էդվարդ Գրիշայի Թամրազյանի, Մելինե Գրիշայի Թամրազյանի և Վաղինակ Գրիշայի Թամրազյանի սեփականության իրավունքը Տավուշի մարզի Իջևան համայնք Այգեհովիտ գյուղի վարչական սահմաններում գտնվող, սահմանազատված 0.23718հա մակերեսով հողամաս նկատմամբ /ծածկագիր 11-009-0373-0094/:

3.Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ա. ՃԱՂԱՐՅԱՆ

20 \_\_\_\_ թ.  
ք.Իջևան







## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻԶԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևանի համայնք  
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Իջևան, (0263)42138 ijevanmunicipality@gmail.com

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2022 թվականի N 1528

**ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ, ԻԶԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ, ԻԶԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՄԵՏԱՂԱԳՈՐԾՆԵՐԻ ՓՈՂՈՑ, 2-  
ՐԴ ՆՐՔԱՆՑՔ, ԹԻՎ 66 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 599.9ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ  
ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ԾՇՏՄԱՆ, ՀՈՂԱՄԱՍԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐՈՒՄ  
ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համայնքի ղեկավարին են դիմել քաղաքացիներ Անդրանիկ Ամիրանի Օղդյանը՝ ծնված 27.11.1955թ., Փառանձեմ Ռոբերտի Մխիթարյանը՝ ծնված 20.03.1966թ., Դավիթ Անդրանիկի Օղդյանը՝ ծնված 05.05.1985թ. և Սիրանուշ Սերյոժայի Բայրամյանը՝ ծնված 25.03.1963թ., որ Իջևան քաղաքի Մետաղագործների փողոց, 2-րդ նրբանցք, թիվ 66 հասցեում ձեռք են բերել բնակելի տուն, որի զբաղեցրած հողամասի օրինական մակերեսը ըստ 29.12.1988թ. Հայկական ԽՍՀ ժողովրդական դեպուտատների Իջևանի քաղաքային խորհրդի գործադիր կոմիտեի նիստի թիվ 13 արձանագրության կազմում է 500.0քմ: Չափագրումից պարզվել է, որ հողամասի փաստացի մակերեսը կազմում է 599.9քմ , ուստի դիմել է, որ մինչև 2001թ. մայիսի 15-ը տնատիրության կողմից տիրապետվող և „Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին,, ՀՀ օրենքի ուժի մեջ մտնելու պահին առկա բնակելի տան կառուցման և սպասարկման համար հատկացված օրինական 500.0քմ մակերեսով հողամասին կից ավել օգտագործվող, սահմանազատված 99.9քմ մակերեսով չկառուցապատված հողամասի և քաղաքաշինական փաստաթղթերը չպահպանված 1995թ., կառուցված 131.21քմ արտաքին և 105.75քմ ներքին մակերեսներով բնակելի տան, որից 1-ին հարկի բնակելի տան 82.45քմ ներքին մակերեսով և նկուղի՝ 23.3քմ ներքին մակերեսով իրավական կարգավիճակի որոշման խնդրանքով /ծածկագիր 11-001-0013-0011/: Հաշվի առնելու այն հանգամանքը, որ օրինական 500.0քմ մակերեսով հողամասին կից ավել օգտագործվող, սահմանազատված 99.9քմ մակերեսով չկառուցապատված հողամասը, 131.21քմ արտաքին մակերեսով բնակելի տունը, որից որից 1-ի՝ հարկի բնակելի տունը 82.45քմ ներքին մակերեսով և նկուղը՝ 23.3քմ ներքին մակերեսով կառուցված չեն և չեն գտնվում ՀՀ „Հողային օրենսգրքի,, 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում ընթերցանության օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ:

Ղեկավարվելով „Հողային օրենսգրքի,, թիվ 43 հոդվածի 3-րդ կետի, „Իրավունք հաստատող փաստաթղթեր չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին“ ՀՀ օրենքի 1-ին և 2-րդ հոդվածների, ՀՀ կառավարության 13.11.2008թ. թիվ 1328-Ն և 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումների պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հաստատել՝ Իջևան քաղաքի Մետաղագործների փողոցի, 2-րդ նրբանցք, թիվ 66 հասցեում գտնվող, քաղաքացիներ Անդրանիկ Ամիրանի Օղդյանին, Փառանձեմ Ռոբերտի Մխիթարյանին, Դավիթ Անդրանիկի Օղդյանին և Սիրանուշ Սերյոժայի Բայրամյանին, պատկանող 599.9քմ մակերեսով հողամասի սահմանները, ըստ ճշտված սահմանները հատակագծի /ծածկագիր 11-001-0013-0011/:

2. Վերականգնել քաղաքացիներ Անդրանիկ Ամիրանի Օղդյանի., Փառանձեմ Ռոբերտի Մխիթարյանի, Դավիթ Անդրանիկի Օղդյանի և Սիրանուշ Սերյոժայի Բայրամյանի սեփականության իրավունքը Իջևան քաղաք Մետաղագործների փողոց, 2-րդ նրբանցք, թիվ 66 հասցեում գտնվող, օրինական 500.0քմ մակերեսով հողամասին կի ավել օգտագործվող, սահմանազատված 99.9քմ մակերեսով չկառուցապատված հողամասի և քաղաքաշինակա փաստաթղթերը չպահպանված 1995թ. կառուցված 131.21քմ արտաքին և 105.75քմ ներքին մակերեսներով բնակել տան, որից 1-ին հարկի բնակելի տան 82.45քմ ներքին մակերեսով և նկուղի՝ 23.3քմ ներքին մակերեսով, օրենքի ուժ համարել քաղաքացիների սեփականությունը:



3. Իջևան քաղաքի բնակիչներ Անդրանիկ Ամիրանի Օղոյանին, Փառանձեմ Ռոբերտի Մխիթարյանին, Դավիթ Անդրանիկի Օղոյանին և Սիրանուշ Սերյոժայի Բայրամյանին պատկանող 599.9քմ մակերես հողամասով բնակելի տանը տալ հետևյալ հասցեավորումը. Տավուշի մարզ, քաղաք Իջևան, Մետաղագործների փողոց, 2-րդ նրբանցք, թիվ 66:

4. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

20 \_\_ թ. \_\_\_\_\_  
ք. Իջևան



**Ա. ՃԱՂԱՐՅԱՆ**



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻԶԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱԴԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևանի համայնք  
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Իջևան, (0263)42138 ijevanmunicipality@gmail.com

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2022թվականի N 1527

15.11.2022թ. ԻԶԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱԿԱՐԻ ԹԻՎ 1324 ՈՐՈՇՈՒՄՆ ԱՆՎԱԿԵՐ  
ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

15.11.2022թ. թիվ 1324 Իջևան համայնքի ղեկավարի որոշումների մեջ առաջացել է անճշտություն, ուստի առաջացել է նշված որոշումներն անվավեր ճանաչելու անհրաժեշտություն:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածների դրույթներով՝

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.15.11.2022թ. թիվ 1324 Իջևան համայնքի ղեկավարի որոշումները ճանաչել անվավեր:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱԿԱՐ

Ա. ՃԱՂԱՐՅԱՆ

20 \_\_ թ. \_\_\_\_\_  
ք. Իջևան







## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻԶԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱԴԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևանի համայնք  
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Իջևան, (0263)42138 ijevanmunicipality@gmail.com

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2022թվականի N 1526

06.12.2022թ. ԻԶԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐԻ ԹԻՎ 1417, ԹԻՎ 1418, ԹԻՎ 1419, ԹԻՎ 1420,  
ԹԻՎ 1421 ՈՐՈՇՈՒՄՆԵՐՆ ԱՆՎԱԿԵՐ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

06.12.2022թ. թիվ 1417, թիվ 1418, թիվ 1419, թիվ 1420, թիվ 1421 Իջևան համայնքի ղեկավարի որոշումների մեջ առաջացել է անճշտություն, ուստի առաջացել է նշված որոշումներն անվավեր ճանաչելու անհրաժեշտություն:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածների դրույթներով՝

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.06.12.2022թ. թիվ 1417, թիվ 1418, թիվ 1419, թիվ 1420, թիվ 1421 Իջևան համայնքի ղեկավարի որոշումները ճանաչել անվավեր:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Ա. ՃԱՂԱՐՅԱՆ

20 \_\_ թ. \_\_\_\_\_  
ք. Իջևան







## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻԶԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱԴԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևանի համայնք  
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Իջևան, (0263)42138 ijevanmunicipality@gmail.com

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2022թվականի N 1525

**ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ, ԻԶԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ, ԳՅՈՒՂ ԳԵՏԱՀՈՎԻՏ, 14 ՓՈՂՈՑ, ԹԻՎ 37  
ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0.107ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ  
ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԽՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ**

Տավուշի մարզի Գետահովիտ համայնք, 14 փողոց, թիվ 37 հասցեում գտնվող և սեփականության իրավունքով քաղաքացի Հովհաննես Հրանտի Խաչատրյանին պատկանող 0.107հա մակերեսով բնակավայրերի նպատակային, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում /վկայական թիվ 10022014-11-0007, ծածկագիր 11-022-0024-0005/ 2016թ. ինքնական կերպով կառուցված 220.22քմ ընդհանուր արտաքին մակերեսով շինությունները /7.2քմ ներքին մակերեսով նկուղ, 124.53քմ ներքին մակերեսով բնակելի տուն, 5.49քմ ներքին մակերեսով բնակելի տան բաց պատշգամբ, 4.99քմ ներքին մակերեսով աստիճան, 14.76քմ ներքին մակերեսով անասնաշենք, 31.82քմ ներքին մակերեսով ծածկ/, որի ընդհանուր ներքին մակերեսը կազմում է 188.79քմ, պետականորեն հաշվառվել են 19.12.2022թ., հաշվառման ծածկագիրն է 2022X7AHGU, ուստի քաղաքացին դիմել է շինության իրավական կարգավիճակը որոշելու խնդրանքով: Ինքնական կերպով կառուցված 220.22քմ ընդհանուր արտաքին մակերեսով շինությունները չեն խոչընդոտում այլ հողատարածքների նպատակային կամ գործառնական նշանակությանը, չեն գտնվում ՀՀ „Հողային օրենսգրքի“ 60-րդ հոդվածով սահմանված հողամասերում, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն սահմանափակում այլ անձանց իրավունքները, չի առաջացնում սերվիտուտ:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 18.05.2006թ. 912-Ն որոշման թիվ 17 կետի թիվ 18 կետի բ/ ենթակետի, 16.12.2021թ. „ՀՀ քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին“, ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներով.

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1.Ճանաչել օրինական՝ Տավուշի մարզ, Իջևան համայնք, գյուղ Գետահովիտ, 14 փողոց, թիվ 37 հասցեում գտնվող քաղաքացի Հովհաննես Հրանտի Խաչատրյանին պատկանող 0.107հա մակերեսով բնակավայրերի նպատակային բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում /վկայական թիվ 10022014-11-0007, ծածկագիր 11-022-0024-0005/ ինքնական կերպով կառուցված 220.22քմ ընդհանուր արտաքին մակերեսով շինությունները /7.2քմ ներքին մակերեսով նկուղ, 124.53քմ ներքին մակերեսով բնակելի տուն, 5.49քմ ներքին մակերեսով բնակելի տան բաց պատշգամբ, 4.99քմ ներքին մակերեսով աստիճան, 14.76քմ ներքին մակերեսով անասնաշենք, 31.82քմ ներքին մակերեսով ծածկ/, որի ընդհանուր ներքին մակերեսը կազմում է 188.79քմ:

2.Հաշվի առնելով, որ ՀՀ կառավարության 04.06.2020թ. թիվ 1023-Ն որոշմամբ, Տավուշի մարզ, Իջևան համայնք, գյուղ Գետահովիտ, 14 փողոց, թիվ 37 հասցեում գտնվող 0.107հա մակերեսով բնակավայրերի նպատակային բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը /վկայական թիվ 10022014-11-0007, ծածկագիր 11-022-0024-0005/ գտնվում է ՀՀ տարածազնահատման գոտիականության 14-րդ գոտում՝ պարտավորեցն քաղաքացի Հովհաննես Հրանտի Խաչատրյանին, Իջևանի համայնքապետարանի հաշվարկային հաշվին մուծել, 1:1209/մեկ հազար երկու հարյուր ինը/ ՀՀ դրամ վճարի չափով՝ 220.22քմ ընդհանուր արտաքին մակերեսով շինությունների դիմաց՝ 266246/երկու հարյուր վաթսույնվեց հազար երկու հարյուր քառասունվեց/ ՀՀ դրամ: Մուծման անդորրագիրը հանդիսանում է սույն որոշման անբաժանելի մասը:

3.Որոշման ընդունման օրվանից, օրինականացման համար սահմանված վճարները 60-օրյա ժամկետում չվճարել դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:



4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ**

20 \_\_ թ. \_\_\_\_\_  
ք. հշևան



**Ա. ՃԱՂԱՐՅԱՆ**





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻԶԵՎԱՆԻ  
ՀԱՄԱՅՆՔԱԴԵՏԱՐԱՆ**

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևանի համայնք  
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Իջևան, (0263)42138 ijevanmunicipality@gmail.com

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

20 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2022թվականի N 1524

**ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻԶԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԱՆՁԱՔԱՐ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ  
ԳՏՆՎՈՂ 0.1582ՀԱ ՄԱԿԵՐԵՍ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵԱՎՈՐՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համայնքի ղեկավարին է դիմել քաղաքաց Սաթենիկ Լևոնի Հակոբյանը, Տավուշի մարզի Իջևան համայնքի Գանձաքար գյուղի վարչական սահմաններում գտնվող 0.1582հա մակերեսով հողամասին հասցեավորում տալու հնդրանքով /ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր 06.12.2022թ. գ/մ թիվ 5255, ծածկագիր 11-021-0076-0004/:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով.:

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

1.Տավուշի մարզի Իջևան համայնքի Գանձաքար գյուղի վարչական սահմաններում գտնվող, Սաթենիկ Լևոնի Հակոբյանին պատկանող 0.1582 հա մակերեսով հողամասին /ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր 06.12.2022թ. գ/մ թիվ 5255, ծածկագիր 11-021-0076-0004/ տալ հետևյալ հասցեավորումը. Տավուշի մարզ, Իջևան համայնք, գյուղ Գանձաքար, 18-րդ փողոց, 1-ին փակուղի, թիվ 2 բնակելի տուն:

2.Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

**Ա. ՃԱՂԱՐՅԱՆ**

20 թ. \_\_\_\_\_  
ք.Իջևան







## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻԶԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱԴԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևանի համայնք  
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Իջևան, (0263)42138 ijevanmunicipality@gmail.com

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2022թվականի N 1523

### ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՆԵՐՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ՎԱՃԱՌՔԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ավագանու 14.10.2022թ. „Տավուշի մարզի Իջևան համայնքի վարչական սահմաններում գտնվող, քաղաքաշինական և այլ նպատակներով հողամասեր հատկացնելու, ինքնական շինություններ և ինքնական օգտագործվող հողամասերի իրավական կարգավիճակը որոշելու մասին“ թիվ142 և 29.04.2022թ. „Տավուշի մարզի Իջևան համայնքի վարչական սահմաններում գտնվող, քաղաքաշինական և այլ նպատակներով հողամասեր հատկացնելու, ինքնական շինություններ և ինքնական օգտագործվող հողամասերի իրավական կարգավիճակը որոշելու մասին“ թիվ73 որոշումների համաձայն 2022թ. դեկտեմբերի 19-ին կայացել է գյուղատնտեսական գործունեություն իրականացնելու նպատակներով հողամասերի /վկայական թիվ08082022-11-0026; թիվ21042022-11-0033; թիվ08082022-11-0028; թիվ08082022-11-0013; / աճուրդային վաճառք:

Հաշվի առնելով աճուրդի արդյունքները և այն հանգամանքը, որ հողամասերը չեն գտնվում ՀՀ «Հողային օրենսգրքի» 60-րդ հոդվածով սահմանված տարածքում և ղեկավարվելով ՀՀ «Հողային օրենսգրքի» 67, 68, 69 և 70 հոդվածների դրույթներով.

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հաստատել 19.12.2022թ. կայացած գյուղատնտեսական գործունեություն իրականացնելու նպատակով հողամասերի տրամադրման աճուրդի եզրափակիչ արձանագրությունները համաձայն՝ ներքոհիշյալ աղյուսակի.

ՀՀ	Արձ. N	Հաղթողի անունը, ազգանունը	Հողամասի հասցեն	Մակերեսը՝ քմ	Վաճառքի գինը՝ դրամ	Նպատակը
1	6	Համլետ Սայադի Պապյան	Իջևան համայնք, գ. Բերքաբեր	3257.4 4200.0 5400.0 2400.0	658816	գյուղատնտեսական գործունեություն

2. Հանձնարարել համայնքապետարանի, քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսություն և բնապահպանության բաժնին /Ա. Այդինյան/ կազմել հողահատկացման փաստաթղթեր և հաղթողի հետ կապել հողամասերի առուվաճառքի պայմանագիր:

**ԻԶԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

**Ա. ՃԱՂԱՐՅԱՆ**

20 \_\_ թ. \_\_\_\_\_  
ք. Իջևան







## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻԶԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱԴԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևանի համայնք  
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Իջևան, (0263)42138 ijevanmunicipality@gmail.com

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2022թվականի N 1522

### ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՆԵՐՈՎ ՏՐԱՄԱԴԻՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ՎԱՃԱՌՔԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ավագանու 14.10.2022թ. „Տավուշի մարզի Իջևան համայնքի վարչական սահմաններում գտնվող, քաղաքաշինական և այլ նպատակներով հողամասեր հատկացնելու, ինքնական շինություններ և ինքնական օգտագործվող հողամասերի իրավական կարգավիճակը որոշելու մասին" թիվ142 որոշման համաձայն 2022թ. դեկտեմբերի 19-ին կայացել է գյուղատնտեսական գործունեություն իրականացնելու նպատակներով հողամասի / վկայական թիվ12072022-11-0034/ աճուրդային վաճառք:

Հաշվի առնելով աճուրդի արդյունքները և այն հանգամանքը, որ հողամասերը չեն գտնվում ՀՀ «Հողային օրենսգրքի» 60-րդ հոդվածով սահմանված տարածքում և ղեկավարվելով ՀՀ «Հողային օրենսգրքի» 67, 68, 69 և 70 հոդվածների դրույթներով.

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հաստատել 19.12.2022թ. կայացած գյուղատնտեսական գործունեություն իրականացնելու նպատակով հողամասերի տրամադրման աճուրդի եզրափակիչ արձանագրությունները համաձայն՝ ներքոհիշյալ աղյուսակի.

ՀՀ	Արձ. N	Հաղթողի անունը, ազգանունը	Հողամասի հասցեն	Մակերեսը՝ քմ	Վաճառքի գինը՝ դրամ	Նպատակը
1	5	Արթուր Շահենի Քասինյան	Իջևան համայնք, ք. Իջևան	2361.1	190069	գյուղատնտեսական գործունեություն

2. Հանձնարարել համայնքապետարանի, քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսություն և բնապահպանության բաժնին /Ա. Այդինյան/ կազմել հողահատկացման փաստաթղթեր և հաղթողի հետ կապել հողամասերի առուվաճառքի պայմանագիր:

**ԻԶԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

**Ա. ՃԱՂԱՐՅԱՆ**

20 \_\_ թ. \_\_\_\_\_  
ք. Իջևան







## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱԿՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻԶԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱԴԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևանի համայնք  
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Իջևան, (0263)42138 ijevanmunicipality@gmail.com

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2022թվականի N 1521

### ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՆԵՐՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ՎԱՃԱՌՔԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ավագանու 14.10.2022թ. „Տավուշի մարզի Իջևան համայնքի վարչական սահմաններում գտնվող, քաղաքաշինական և այլ նպատակներով հողամասեր հատկացնելու, ինքնական շինություններ և ինքնական օգտագործվող հողամասերի իրավական կարգավիճակը որոշելու մասին“ թիվ142 որոշման համաձայն 2022թ. դեկտեմբերի 19-ին կայացել է գյուղատնտեսական գործունեություն իրականացնելու նպատակներով հողամասի / վկայական թիվ18042022-11-0018/ աճուրդային վաճառք:

Հաշվի առնելով աճուրդի արդյունքները և այն հանգամանքը, որ հողամասերը չեն գտնվում ՀՀ «Հողային օրենսգրքի» 60-րդ հոդվածով սահմանված տարածքում և ղեկավարվելով ՀՀ «Հողային օրենսգրքի» 67, 68, 69 և 70 հոդվածների դրույթներով.

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հաստատել 19.12.2022թ. կայացած գյուղատնտեսական գործունեություն իրականացնելու նպատակով հողամասերի տրամադրման աճուրդի եզրափակիչ արձանագրությունները համաձայն՝ ներքոհիշյալ աղյուսակի.

ՀՀ	Արձ. N	Հաղթողի անունը, ազգանունը	Հողամասի հասցեն	Մակերեսը՝ քմ	Վաճառքի գինը՝ դրամ	Նպատակը
2	4	Սոնյա Ռադիկի Անտոնյան	Իջևան համայնք, ք. Իջևան	4978.9	383375	գյուղատնտեսական գործունեություն

2. Հանձնարարել համայնքապետարանի, քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսություն և բնապահպանության բաժնին /Ա. Այդինյան/ կազմել հողաշինության փաստաթղթեր և հաղթողի հետ կապել հողամասերի առուվաճառքի պայմանագիր:

**ԻԶԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵՂԱՎԱՐ**

**Ա. ՃԱՂԱՐՅԱՆ**

20 \_\_ թ. \_\_\_\_\_  
ք. Իջևան







## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻԶԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱԴԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևանի համայնք  
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Իջևան, (0263)42138 ijevanmunicipality@gmail.com

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2022թվականի N 1520

### ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՆԵՐՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ՎԱՃԱՌՔԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ավագանու 14.10.2022թ. „Տավուշի մարզի Իջևան համայնքի վարչական սահմաններում գտնվող, քաղաքաշինական և այլ նպատակներով հողամասեր հատկացնելու, ինքնական շինություններ և ինքնական օգտագործվող հողամասերի իրավական կարգավիճակը որոշելու մասին" թիվ142 որոշման համաձայն 2022թ. դեկտեմբերի 19-ին կայացել է գյուղատնտեսական գործունեություն իրականացնելու նպատակներով հողամասի / վկայական թիվ02052022-11-0025/ աճուրդային վաճառք:

Հաշվի առնելով աճուրդի արդյունքները և այն հանգամանքը, որ հողամասերը չեն գտնվում ՀՀ «Հողային օրենսգրքի» 60-րդ հոդվածով սահմանված տարածքում և ղեկավարվելով ՀՀ «Հողային օրենսգրքի» 67, 68, 69 և 70 հոդվածների դրույթներով.

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հաստատել 19.12.2022թ. կայացած գյուղատնտեսական գործունեություն իրականացնելու նպատակով հողամասերի տրամադրման աճուրդի եզրափակիչ արձանագրությունները համաձայն՝ ներքոհիշյալ աղյուսակի.

ՀՀ	Արձ. N	Հաղթողի անունը, ազգանունը	Հողամասի հասցեն	Մակերեսը՝ քմ	Վաճառքի գինը՝ դրամ	Նպատակը
2	3	Ռուբեն Դավիթի Վարչամյան	Իջևան համայնք, ք. Իջևան	985.8	75906	գյուղատնտեսական գործունեություն

2. Հանձնարարել համայնքապետարանի, քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսություն և բնապահպանության բաժնին /Ա. Այդինյան/ կազմել հողահատկացման փաստաթղթեր և հաղթողի հետ կապել հողամասերի առուվաճառքի պայմանագիր:

**ԻԶԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿՈՎԱՐ**

**Ա. ՃԱՂԱՐՅԱՆ**

20 \_\_ թ. \_\_\_\_\_  
ք. Իջևան







## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻԶԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱԴԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևանի համայնք  
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Իջևան, (0263)42138 ijevanmunicipality@gmail.com

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2022թվականի N 1519

### ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՆԵՐՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ՎԱՃԱՌՔԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ավագանու 14.10.2022թ. „Տավուշի մարզի Իջևան համայնքի վարչական սահմաններում գտնվող, քաղաքաշինական և այլ նպատակներով հողամասեր հատկացնելու, ինքնակամ շինություններ և ինքնակամ օգտագործվող հողամասերի իրավական կարգավիճակը որոշելու մասին" թիվ142 որոշման համաձայն 2022թ. դեկտեմբերի 19-ին կայացել է գյուղատնտեսական գործունեություն իրականացնելու նպատակներով հողամասի / վկայական թիվ27042022-11-0022/ աճուրդային վաճառք:

Հաշվի առնելով աճուրդի արդյունքները և այն հանգամանքը, որ հողամասերը չեն գտնվում ՀՀ «Հողային օրենսգրքի» 60-րդ հոդվածով սահմանված տարածքում և ղեկավարվելով ՀՀ «Հողային օրենսգրքի» 67, 68, 69 և 70 հոդվածների դրույթներով.

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հաստատել 19.12.2022թ. կայացած գյուղատնտեսական գործունեություն իրականացնելու նպատակով հողամասերի տրամադրման աճուրդի եզրափակիչ արձանագրությունները համաձայն՝ ներքոհիշյալ աղյուսակի.

ՀՀ	Արձ. N	Հաղթողի անունը, ազգանունը	Հողամասի հասցեն	Մակերեսը՝ քմ	Վաճառքի գինը՝ դրամ	Նպատակը
2	2	Ռուբեն Դավիթի Վարշամյան	Իջևան համայնք, ք. Իջևան	1124.2	86564	գյուղատնտեսական գործունեություն

2. Հանձնարարել համայնքապետարանի, քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսություն և բնապահպանության բաժնին /Ա. Այդինյան/ կազմել հողատնտեսական փաստաթղթեր և հաղթողի հետ կապել հողամասերի առուվաճառքի պայմանագիր:

**ԻԶԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

**Ա. ՃԱՂԱՐՅԱՆ**

20 \_\_ թ. \_\_\_\_\_  
ք.Իջևան





## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻԶԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱԴԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևանի համայնք  
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Իջևան, (0263)42138 ijevanmunicipality@gmail.com

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2022 թվականի N 1518

### ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ՎԱՃԱՌՔԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ավագանու 14.10.2022թ. „Տավուշի մարզի Իջևան համայնքի վարչական սահմաններում գտնվող, քաղաքաշինական և այլ նպատակներով հողամասեր հատկացնելու, ինքնական շինություններ և ինքնական օգտագործվող հողամասերի իրավական կարգավիճակը որոշելու մասին“ թիվ 142 որոշման համաձայն 2022թ. դեկտեմբերի 19-ին կայացել է քաղաքաշինական նպատակներով հողամասի աճուրդային վաճառք:

Հաշվի առնելով աճուրդի արդյունքները և այն հանգամանքը, որ հողամասերը չեն գտնվում ՀՀ «Հողային օրենսգրքի» 60-րդ հոդվածով սահմանված տարածքում և ղեկավարվելով ՀՀ «Հողային օրենսգրքի» 67, 68, 69 և 70 հոդվածների դրույթներով.

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հաստատել 19.12.2022թ. կայացած քաղաքաշինական նպատակով հողամասի տրամադրման աճուրդի եզրափակիչ արձանագրությունները համաձայն՝ ներքոհիշյալ աղյուսակի.

ՀՀ	Արձ. N	Հաղթողի անունը, ազգանունը	Հողամասի հասցեն	Մակերեսը՝ քմ	Վաճառքի գինը՝ դրամ	Նպատակը
1	1	Միքայել Համբարձումի Աֆյան	ք. Իջևան, Երևանյան փողոց թիվ 83/4	146.7	685456	Հասարակական սպասարկման օբյեկտ

2. Հանձնարարել համայնքապետարանի, քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսություն և բնապահպանության բաժնին /Ա. Այդինյան/ կազմել հողամասի վաճառքի փաստաթղթեր և հաղթողի հետ կապել հողամասի առուվաճառքի պայմանագիր:

**ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ**

**Ա. ՃԱՂԱՐՅԱՆ**

20 \_\_ թ. \_\_\_\_\_  
ք. Իջևան







## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻԶԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱԴԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևանի համայնք  
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Իջևան, (0263)42138 ijevanmunicipality@gmail.com

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2022 թվականի N 1517

### ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻԶԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԽԱՇԹԱՌԱԿ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0.281092 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՃՇՏՄԱՆ, ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԱՌԿԱ ՇԻՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ղեկավարին են դիմել քաղաքացիներ Ալբերտ Թոռնիկի Վանեսյանը՝ ծնված 26.03.1966թ.թ., Աննա Պավլիկի Սարիատյանը՝ ծնված 17.03.1970թ. և Մերի Ալբերտի Վանեսյանը՝ ծնված 06.06.1989թ., որ Տավուշի մարզի Խաշթառակ գյուղի վարչական սահմաններում սեփականության իրավունքով ձեռք է բերել բնակելի տուն, որի զբաղեցրած հողամասի օրինական մակերեսը, համաձայն Խաշթառակ համայնքի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 22.04.1991թ. թիվ 14 որոշման կազմում է 0.23հա /ծածկագիր 11-035-0058-0035/: Չափագրումից պարզվել է, որ հողամասի փաստացի մակերեսը կազմում է 0.281092հա, ուստի դիմել է հողամասի սահմանների ճշտման և որ մինչև 2001թ. մայիսի 15-ը տնտեսության կողմից տիրապետվող և „Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին“, ՀՀ օրենքի ուժի մեջ մտնելու պահին առկա բնակելի տան կառուցման և սպասարկման համար հատկացված օրինական 0.23հա մակերեսով հողամասին կից ավել օգտագործվող 0.051092հա մակերեսով սահմանազատված չկառուցապատված հողամասի և քաղաքաշինական փաստաթղթերը չպահպանված 1955թ. կառուցված 351.4քմ ներքին մակերեսով բնակելի տան, որից 82.4քմ ներքին մակերեսով 1-ին հարկի բնակելի տան , 18.1քմ ներքին մակերեսով ծածկի, 17.9քմ ներքին մակերեսով 1-ին հարկի բաց պատշգամբի, 103.2քմ ներքին մակերեսով բաց պատշգամբի, 103.2քմ ներքին մակերեսներով բնակելի տան 2-րդ հարկի, 17.9քմ ներքին մակերեսով բաց պատշգամբների, 3քմ ներքին մակերեսով աստիճանահարթակի, 5.7քմ ներքին մակերեսով կաթսայատան իրավական կարգավիճակի որոշման և հասցեավորում տալու խնդրանքով /ծածկագիր 11-035-0058-0035/: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ սահմանազատված 0.281092 մակերեսով հողամասը, 1955թ.թ. կառուցված 351.4քմ ներքին մակերեսով բնակելի տունը, որից 82.4քմ ներքին մակերեսով 1-ին հարկի բնակելի տունը , 18.1քմ ներքին մակերեսով ծածկը, 17.9քմ ներքին մակերեսով 1-ին հարկի բաց պատշգամբը, 103.2քմ ներքին մակերեսով բաց պատշգամբը, 103.2քմ ներքին մակերեսներով բնակելի տան 2-րդ հարկը, 17.9քմ ներքին մակերեսով բաց պատշգամբները, 3քմ ներքին մակերեսով աստիճանահարթակը, 5.7քմ ներքին մակերեսով կաթսայատունը կառուցված չեն և չեն գտնվում ՀՀ „Հողային օրենսգրքի“, 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ:

Ղեկավարվելով ՀՀ „Հողային օրենսգրքի“, թիվ 43 հոդվածի, 3-րդ կետի, „Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին“ ՀՀ օրենքի 1-ին և 2-րդ հոդվածների, ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով:

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հաստատել՝ Տավուշի մարզի Իջևան համայնքի Խաշթառակ գյուղի վարչական սահմաններում գտնվող, սեփականության իրավունքով քաղաքացիներ Ալբերտ Թոռնիկի Վանեսյանին, Աննա Պավլիկի Սարիատյանին և Մերի Ալբերտի Վանեսյանին պատկանող բնակելի տան զբաղեցրած 0.281092հա մակերեսով և 11-035-0058-0035 ծածկագրով հողամասի սահմանները, ըստ ճշտված սահմաններով հատակագծի:

2. Վերականգնել քաղաքացիներ Ալբերտ Թոռնիկի Վանեսյանի, Աննա Պավլիկի Սարիատյանի և Մերի Ալբերտի Վանեսյանի սեփականության իրավունքը Տավուշի մարզի Իջևան համայնքի Խաշթառակ գյուղի վարչական սահմաններում գտնվող, օրինական 0.23հա հողամասին կից ավել օգտագործվող, սահմանազատված 0.05109 մակերեսով չկառուցապատված հողամասի, 351.4քմ ներքին մակերեսով բնակելի տան, որից 82.4քմ ներքին



մակերեսով 1-ին հարկի բնակելի տան , 18.1քմ ներքին մակերեսով ծածկի, 17.9քմ ներքին մակերեսով 1-ին հարկի բաց պատշգամբի, 103.2քմ ներքին մակերեսով բաց պատշգամբի, 103.2քմ ներքին մակերեսներով բնակելի տան 2-րդ հարկի, 17.9քմ ներքին մակերեսով բաց պատշգամբների, 3քմ ներքին մակերեսով աստիճանահարթակի, 5.7քմ ներքին մակերեսով կաթսայատան նկատմամբ / ծածկագիր 11-035-0058-0035/ և օրենքի ուժով համարել քաղաքացիների սեփականությունը:

3. Տավուշի մարզի Իջևան համայնքի Խաշթառակ գյուղի վարչական սահմաններում գտնվող գտնվող և քաղաքացիներ Ալբերտ Թոռնիկի Վանեայանին, Աննա Պավլիկի Սարիառյանին և Մերի Ալբերտի Վանեայանին պատկանող 0.281092հա մակերես հողամասով /ծածկագիր 11-035-0058-0035/ բնակելի տանը տալ հետևյալ հասցեավորումը. Տավուշի մարզ, Իջևան համայնք, գյուղ Խաշթառակ, 10 փողոց, թիվ 22:

4.Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման :

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

**Ա. ՃԱՂԱՐՅԱՆ**

20 \_\_ թ. \_\_\_\_\_  
ք.Իջևան







## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻԶԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱԴԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևանի համայնք  
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Իջևան, (0263)42138 ijvanmunicipality@gmail.com

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2022 թվականի N 1516

### ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ, ԻԶԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ, ԻԶԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 2.5 ՀԱ ՄԱԿԵՐԵՏՈՎ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ 152.26 ԲՄ ԱՐՏԱՔԻՆ ՄԱԿԵՐԵՏՈՎ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԽՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ, ՀՈՂԱՄԱՍԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՃՇՏՄԱՆ ԵՎ ՏԵՂԱԴԻՐՔԻ ՈՒՂՂՄԱՆ ՄԱՍԻՆ

Տավուշի մարզի Իջևան համայնք, Իջևան քաղաքի վարչական սահմաններում /Աղսու/ գտնվող և սեփականության իրավունքով քաղաքացի Կամո Հրանտի Մարկոսյանին պատկանող 2.5 հա մակերեսով հողամասում /վկայական թիվ 013031, ծածկագիր 11-001-0233-0002/ 1998-1999 թթ. Ինքնակամ կերպով կառուցված 152.26 ԲՄ արտաքին մակերեսով շինությունների, /պահեստ՝ 21.17 ԲՄ ներքին մակերեսով, պահեստի բաց պատշգամբ՝ 45.26 ԲՄ ներքին մակերեսով, ձեղնահարկ՝ 32.91 ԲՄ ներքին մակերեսով, ձեղնահարկի բաց պատշգամբ՝ 2.52 ԲՄ ներքին մակերեսով, անասնաշենք՝ 34.96 ԲՄ ներքին մակերեսով/, որի ընդհանուր ներքին մակերեսը կազմում է 136.82, որոնց նկատմամբ 13.12.2022 թ. կատարվել է հաշվառում՝ ծածկագիր 2022WEQCVU , ուստի քաղաքացիները դիմել են շինության իրավական կարգավիճակը որոշելու խնդրանքով: „ԳՍԲ ԳՐՈՒՊ“ ՍՊԸ-ի կողմից կատարվել է 11-001-0233-0002 ծածկագրով հողամասի չափագրություն Տավուշի մարզ, Իջևան համայնք, Իջևան քաղաք, որից պարզվել է, որ 11-001-0233-0002 ծածկագրով հողամասի դիրքը սխալ է տեղադրված ՀՀ կառավարության առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի Տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնի էլեկտրոնային քարտեզում: Վերոնշյալից ելնելով, անհրաժեշտություն է առաջացել կատարել հողամասի տեղադիրքի ուղղում: Համաձայն ՀՀ կառավարության 06.10.2005 թ. թիվ 2417-Ն որոշման և համաձայն թիվ 013031 վկայականի, 2.5 հա մակերեսով և 11-001-0233-0002 ծածկագրով հողամասը դասվել է արդյունաբերության, ընդերքագտնության և այլ արտադրական նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության հողերի շարքին Ինքնակամ կերպով կառուցված 152.26 ԲՄ արտաքին մակերեսով շինությունները և նրա զբաղեցրած հողամասը չեն խոչընդոտում այլ հողատարածքների նպատակային կամ գործառնական նշանակությանը, չեն դասվում ՀՀ „Հողային օրենսգրքի“ 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի շարքին, չեն գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն սահմանափակում այլ անձանց իրավունքները, չեն առաջացնում սերվիտուտ:

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 18.05.2006 թ. 912-Ն որոշման թիվ 18 կետի, ա/ ենթակետի, 29.12.2005 թ. թիվ 2387-Ն, 29.12.2011 թ. թիվ 1920-Ն և 02.02.2002 թ. թիվ 88 որոշումների, 16.12.2021 թ. „ՀՀ քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին“, ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ կետի և 3-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջներով և „ԳՍԲ ԳՐՈՒՊ“ ՍՊԸ-ի կողմից տրված եզրակացության.

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Ճանաչել օրինական՝ Տավուշի մարզի քաղաք Իջևանի վարչական սահմաններում /Աղսու/ գտնվող և սեփականության իրավունքով քաղաքացի Կամո Հրանտի Մարկոսյանին պատկանող 2.5 հա մակերեսով հողամասում /վկայական թիվ 013031, ծածկագիր 11-001-0233-0002/ կառուցված 152.26 ԲՄ արտաքին մակերեսով շինությունները, որից պահեստը՝ 21.17 ԲՄ ներքին մակերեսով, պահեստի բաց պատշգամբը՝ 45.26 ԲՄ ներքին մակերեսով, ձեղնահարկը՝ 32.91 ԲՄ ներքին մակերեսով, ձեղնահարկի բաց պատշգամբը՝ 2.52 ԲՄ ներքին մակերեսով, անասնաշենքը՝ 34.96 ԲՄ ներքին մակերեսով:

2. Իջևան քաղաքի վարչական սահմաններում /Աղսու/ գտնվող, քաղաքացի Կամո Հրանտի Մարկոսյանին պատկանող 2.5 հա մակերեսով հողամասով շինություններին տալ հետևյալ հասցեավորումը՝ Տավուշի մարզ, Իջևան համայնք, քաղաք Իջևան, Երևանյան փողոց, 6-րդ նրբ. թիվ 2:

3. Հաշվի առնելով, որ ՀՀ կառավարության 04.06.2020 թ. թիվ 1023-Ն որոշմամբ, Տավուշի մարզ, Իջևան համայնք, քաղաք Իջևան, Երևանյան փողոց, 6-րդ նրբ. թիվ 2 հասցեում գտնվող, ինքնակամ կերպով կառուցված շինությունը գտնվում է ՀՀ տարածազնահատման գոտիականության 12-րդ գոտում, անկային ինքնակամ կառուցված շինությունների համար գումար չի գանձվում:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ա. ՃԱՂԱՐՅԱՆ





## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻԶԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևանի համայնք  
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Իջևան, (0263)42138 ijevanmunicipality@gmail.com

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2022 թվականի N 1515

### ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻԶԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԼՈՒՍԱԾՈՐ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0.17 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՀԱՍՑԵԱՎՈՐՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ղեկավարին է դիմել քաղաքացի Սաշա Լուրիկի Մատինյանը Տավուշի մարզի Իջևան համայնքի Լուսածոր գյուղի վարչական սահմաններում գտնվող և սեփականության իրավունքով իրեն պատկանող 0.17 հա մակերեսով բնակելի կառուցապատման հողամասին և բնակելի տանը հասցեավորում տրամադրելու խնդրանքով / վկայական թիվ 388273, ծածկագիր 11-034-0021-0006/:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով:

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. ՀՀ Տավուշի մարզի Իջևան համայնքի Լուսածոր գյուղի վարչական սահմաններում գտնվող և սեփականության իրավունքով Սաշա Լուրիկի Մատինյանին պատկանող 0.17 հա մակերեսով բնակելի կառուցապատման հողամասին և բնակելի տանը /վկայական թիվ 388273, ծածկագիր 11-034-0021-0006/ տրամադրել հետևյալ հասցեավորումը. ՀՀ Տավուշի մարզ, Իջևան համայնք, գյուղ Լուսածոր 5-րդ փողոց, 5 տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ա. ՃԱՂԱՐՅԱՆ

20 \_\_\_\_ թ. \_\_\_\_\_  
Իջևան







## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻԶԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱԴԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևանի համայնք  
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Իջևան, (0263)42138 ijevanmunicipality@gmail.com

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2022 թվականի N 1514

**ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ, ԻԶԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ, ԱԶԱՋՈՒՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 3-ՐԴ ՓՈՂՈՑ, 1-ԻՆ  
ՓԱԿՈՒՂԻ, ԹԻՎ 4 ՀԱՍՑԵՆՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0.97ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ  
ԲԱԺԱՆՈՒՄԻՑ ԱՌԱՋԱՑԱԾ ԱՌԱՆՁԻՆ ՄԻԱԿՈՐՆԵՐԻՆ ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ, ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ  
ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Տավուշի մարզի Իջևան համայնքի Աջաջուր գյուղի 3-րդ փողոց, 1-ին փակուղի, 4 հասցեում գտնվող, սեփականության իրավունքով Սարգիս Թոռնիկի Ստեփանյանի և Ալիսա Սմեիլի Մովսեսյանի սեփականությունը բնակավայրերի բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0.097հա մակերեսով հողամասից /վկայական թիվ 04082017-11-0008, ծածկագիր 11-013-0068-0006/ և նրա վրա առկա 224.3քմ մակերեսով անշարժ գույքից, անհրաժեշտություն է առաջացել համապատասխանաբար առանձնացնել 0.08608հա մակերեսով և 0.01092հա մակերեսով անշարժ գույք և տալ հասցեավորում:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ „Հողային օրենսգրքի,, 97-րդ հոդվածի և ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման և ՀՀ կառավարության 29.12.2011թ. թիվ 1920-Ն որոշման պահանջներով

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Տավուշի մարզի Իջևան համայնքի Աջաջուր գյուղի 3-րդ փողոց, 1-ին փակուղի, 4 հասցեում գտնվող և Սարգիս Թոռնիկի Ստեփանյանի և Ալիսա Սմեիլի Մովսեսյանի սեփականությունը հանդիսացող բնակավայրերի բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0.097հա մակերեսով հողամասից /վկայական թիվ 04082017-11-0008, ծածկագիր 11-013-0068-0006/ համապատասխանաբար առանձնացված 0.08608հա մակերեսով հողամասի հասցեն թողնել նույնը. Տավուշի մարզ, Իջևան համայնք, գյուղ Աջաջուր 3-րդ փողոցի, 1-ին փակուղի, թիվ 4:

2. Իջևան համայնքի, Աջաջուր գյուղի 3-րդ փողոցի, 1-ին փակուղի, թիվ 4 հասցեում գտնվող և Սարգիս Թոռնիկի Ստեփանյանի և Ալիսա Սմեիլի Մովսեսյանի սեփականությունը հանդիսացող բնակավայրերի բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0.01092հա մակերեսով հողամասի /վկայական թիվ 04082017-11-0008, ծածկագիր 11-013-0068-0006/ գործառնական նշանակությունը բնակելի կառուցապատումից փոխադրել բնակավայրերի հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողերի շարք:

3. Իջևան համայնքի, Աջաջուր գյուղի 3-րդ փողոցի, 1-ին փակուղի, թիվ 4 հասցեում գտնվող և Սարգիս Թոռնիկի Ստեփանյանի և Ալիսա Սմեիլի Մովսեսյանի սեփականությունը հանդիսացող բնակավայրերի հասարակական կառուցապատման գործառնական նշանակության 0.097հա մակերեսով հողամասից /վկայական թիվ 04082017-11-0008, ծածկագիր 11-013-0068-0006/ համապատասխանաբար առանձնացված 0.01092հա մակերեսով անշարժ գույքի միավորին տալ հետևյալ հասցեավորումը. Տավուշի մարզ, Իջևան համայնք, գյուղ Աջաջուր 3-րդ փողոց, 1-ին փակուղի, թիվ 4/1:

4. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

**Ա. ՃԱՂԱՐՅԱՆ**

20 \_\_ թ. \_\_\_\_\_  
ք. Իջևան







## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻԶԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևանի համայնք  
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Իջևան, (0263)42138 ijevanmunicipality@gmail.com

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2022 թվականի N 1513

**ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ, ԻԶԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ, ԱԶԱՋՈՒՐ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ  
ԳՏՆՎՈՂ, ՏՆԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՓԱՍՏԱՑԻ ՏԻՐԱՊԵՏՎՈՂ 0.33969 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ  
ՀՈՂԱՄԱՍԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՃՇՏՄԱՆ, ՀՈՂԱՄԱՍԻ, ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ  
ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ԵՎ ՀԱՑԵԱՎՈՐՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համայնքի ղեկավարին է դիմել քաղաքացի Վաչիկ Արամայիսի Աղինյանը՝ ծնված 12.06.1940թ., որ ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի /ս/մ թիվ 857, կազմված՝ 17.09.2021թ., ս/մ թիվ 1243, թիվ 1245, կազմված 17.11.2022թ./ հիման վրա, Տավուշի մարզ, Իջևան համայնք, Աչաջուր գյուղի 35 փողոց թիվ 15 հասցեում ձեռք է բերել բնակելի տուն՝ իր հողամասով: Բնակելի տան զբաղեցրած հողամասի օրինական մակերեսը կազմում է 0.3369 հա / ծածկագիր 11-013-0231-0021/, ուստի դիմել է փաստացի իր տիրապետման տակ գտնվող 0.33969 հա մակերեսով հողամասի սահմանների ճշտման և մինչև 2001թ. մայիսի 15-ը տնատիրության կողմից տիրապետվող և „Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին,, ՀՀ օրենքի ուժի մեջ մտնելու պահին առկա բնակելի տան կառուցման և սպասարկման համար հատկացված 0.33969 հա մակերեսով հողամասի հողամասի և քաղաքաշինական փաստաթղթերը չպահպանված 1989թ. ինքնական կառուցված 98.845 քմ արտաքին մակերեսով բնակելի տան 1-ին հարկի, 14.72 քմ արտաքին մակերեսով բնակելի տան 1-ին հարկի բաց պատշգամբի, 0.84 քմ արտաքին մակերեսով աստիճանների, 2000թ. կառուցված 19.58 քմ արտաքին մակերեսով անասնաշենքի, 23.52 քմ արտաքին մակերեսով մառանի իրավական կարգավիճակի որոշման խնդրանքով /ծածկագիր 11-013-0231-0021/: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ օրինական 0.33969 հա մակերեսով հողամասը և 98.845 քմ արտաքին մակերեսով բնակելի տան 1-ին հարկը, 14.72 քմ արտաքին մակերեսով բնակելի տան 1-ին հարկի բաց պատշգամբը, 0.84 քմ արտաքին մակերեսով աստիճանները, 2000թ. կառուցված 19.58 քմ արտաքին մակերեսով անասնաշենքը, 23.52 քմ արտաքին մակերեսով մառանը կառուցված չեն և չեն գտնվում ՀՀ „Հողային օրենսգրքի,, 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ:

Ղեկավարվելով ՀՀ „Հողային օրենսգրքի,, թիվ 43 հոդվածի 3-րդ կետի, „Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին” ՀՀ օրենքի 1-ին և 2-րդ հոդվածների, ՀՀ „Քաղաքացիական օրենսգրքի,, 188-րդ հոդվածի, ՀՀ կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման թիվ 22.1 կետի, 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման, ՀՀ „Քաղաքացիական օրենսգրքի,, 188-րդ հոդվածի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հաստատել՝ Տավուշի մարզ, Իջևան համայնք, Աչաջուր գյուղի 35 փողոց թիվ 15 հասցեում գտնվող, քաղաքացի Վաչիկ Արամայիսի Աղինյանին պատկանող 0.33969 հա մակերեսով հողամասի սահմանները, ըստ ճշտված սահմաններով հատակագծի /ծածկագիր 11-013-0231-0021/:

2. Վերականգնել քաղաքացի Վաչիկ Արամայիսի Աղինյանի սեփականության իրավունքը Տավուշի մարզ, Իջևան համայնք, Աչաջուր գյուղի 35 փողոց թիվ 15 հասցեում գտնվող, 0.33969 հա հողամասի, կառուցված 98.845 քմ արտաքին մակերեսով բնակելի տան 1-ին հարկի, 14.72 քմ արտաքին մակերեսով բնակելի տան 1-ին հարկի բաց պատշգամբի, 0.84 քմ արտաքին մակերեսով աստիճանների, 2000թ. կառուցված 19.58 քմ արտաքին մակերեսով անասնաշենքի, 23.52 քմ արտաքին մակերեսով մառանի նկատմամբ /ծածկագիր 11-013-0231-0021/ և օրենքի ուժով համարել քաղաքացու սեփականությունը:

3. Քաղաքացի Վաչիկ Արամայիսի Աղինյանին պատկանող 0.33969 հա մակերես հողամասով /ծածկագիր 11-013-0231-0021/ բնակելի տանը տալ հետևյալ հասցեավորումը. Տավուշի մարզ, Իջևան համայնք, գյուղ Աչաջուր 35-րդ փողոց,



թիվ 15 բնակելի տուն :

4. Հաշվի առնելով, որ ՀՀ կառավարության 04.06.2020թ. թիվ 1023-Ն որոշմամբ, Տավուշի մարզ, Իջևան համայնք, քաղաք Իջևան, փողոց, թիվ հասցեում գտնվող, ինքնակամ կերպով կառուցված շինությունը գտնվում է ՀՀ տարածագնահատման գոտիականության 15-րդ գոտում, սակայն ինքնակամ կառուցված շինությունների համար գումար չի գանձվում :

5.Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

**Ա. ՃԱՂԱՐՅԱՆ**

20 \_\_ թ. \_\_\_\_\_  
ք.Իջևան







**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻԶԵՎԱՆԻ  
ՀԱՄԱՅՆՔԱԴԵՏԱՐԱՆ**

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևանի համայնք  
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Իջևան, (0263)42138 ijevanmunicipality@gmail.com

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

16 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2022թվականի N 1512

**30.11.2022թ. ԻԶԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐԻ ԹԻՎ 1393 ՈՐՈՇՈՒՄՆ ԱՆՎԱՎԵՐ  
ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

30.11.2022թ. թիվ 1393 Իջևան համայնքի ղեկավարի որոշումների մեջ առաջացել է անճշտություն, ուստի առաջացել է նշված որոշումներն անվավեր ճանաչելու անհրաժեշտություն:

Սաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածների դրույթներով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

1.30.11.2022թ. թիվ 1393 Իջևան համայնքի ղեկավարի որոշումները ճանաչել անվավեր:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ**

**Ա. ՃԱՂԱՐՅԱՆ**

20 \_\_ թ. \_\_\_\_\_  
ք.Իջևան







## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻԶԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱԴԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևանի համայնք  
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Իջևան, (0263)42138 ijevanmunicipality@gmail.com

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2022թվականի N 1511

ՄԱՐԶ ՏԱՎՈՒՇ, ՀԱՄԱՅՆՔ ԻԶԵՎԱՆ, ԻԶԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՐՑԱԽՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 26/8  
ԵՎ ԱՐՑԱԽՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 26/12 ՀԱՍՑԵՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻ  
ՄԻԱՎՈՐՈՒՄԻՑ ԱՌԱՋԱՅԱԾ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԻՆ ՀԱՍՑԵԱՎՈՐՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ղեկավարին է դիմել քաղաքացի Մհեր Արսենի Հարությունյանը, իրեն պատկանող Տավուշի մարզ, Իջևան համայնք, Իջևան քաղաքի Արցախյան փողոցի թիվ 26/8 /վկայական թիվ 29042022-11-0021/ և կառուցապատման իրավունքով իրեն պատկանող Արցախյան փողոցի թիվ 26/12 /վկայական թիվ 02062022-11-0025/ հասցեներում գտնվող երկու առանձին գույքային միավորների միավորումից առաջացած գույքին հասցեավորում տալու խնդրանքով:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ „Հողային օրենսգրքի“, թիվ 97-րդ հոդվածի, ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումանպահանջներով՝

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Տավուշի մարզ, Իջևան համայնքի Իջևան քաղաքի Արցախյան փողոցի թիվ 26/8 /վկայական թիվ 29042022-11-0021/ և Արցախյան փողոցի թիվ 26/12 /վկայական թիվ 02062022-11-0025/ հասցեներում գտնվող և քաղաքացի Մհեր Արսենի Հարությունյանին պատկանող երկու առանձին գույքային միավորների միավորումից առաջացած գույքին տալ հետևյալ հասցեավորումը. Տավուշի մարզ, Իջևան համայնք, քաղաք Իջևան, Արցախյան փողոցի թիվ 26/8:

2. Սույն որոշումն ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ա. ՃԱՂԱՐՅԱՆ

20\_\_թ. \_\_\_\_\_  
ք. Իջևան







## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻԶԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱԴԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևանի համայնք  
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Իջևան, (0263)42138 ijevanmunicipality@gmail.com

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2022 թվականի N 1510

04.08.2022թ. ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱԿԱՐԻ ԹԻՎ 821 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

04.08.2022թ. համայնքի ղեկավարի թիվ 821 որոշման մեջ առաջացել է փոփոխություն կատարելու անհրաժեշտություն:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 8-րդ գլխի, թիվ 33 և թիվ 34 հոդվածների դրույթներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

04.08.2022թ. համայնքի ղեկավարի թիվ 821 որոշումը կարդալ.

„ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻԶԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԱՆՁԱՔԱՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 11-021-0022-0023 ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,05316 ՀԱ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻ, ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

